ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/4-2.1 >>

ք. Աշտարակ << 27 >>նոյեմբերի 2012թ

<< ՀՀ Արագածոտնի մարզպետարանը >>-ը, ի դեմս Ս.Սահակյանի, որը գործում է <<մարզպետարանի>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԵՍ ԵՎ ՆԱ>> ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<**Ճարճակիս համայնքի դպրոցի վերանորոգման**>> աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝<<2012թ.դեկտեմբերի20-ը>>:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված երեք հարյուր վաթսունհինգ օրը (առնվազն 365 օրացուցային օր): Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են սույն պայմանագրի N – Հավելվածում**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) **մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը *(իսկ փարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարումը)*:**

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել

պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում *27 799 701* **(քսանյոթ միլիոն յոթ հարյուր ինսունինը հազար յոթ հարյուր մեկ)** ՀՀ դրամ, որից **4 633 284** **(չորս միլիոն վեց հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր ութսունչորս)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.1.1 Պայմանագրի գնից՝ **5 559 000** **(հինգ միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար)**ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2012թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության կամ ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում գործակալի կամ ենթակապալառուի պարտավորությունների համար:

8.5 . Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 1 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.8 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կապալառու
<< ՀՀ Արագածոտի մարզպետարան	<< ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Գ.Սեդրակյան 4	ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11
<<Աշտարակի ՀՀՊՊ>	<< Ակբա կրեդիտ Ագրիկոլ>ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ
Հ/Հ h/h 900441041226	Հ/Հ h/h 22004933M22000 Հ/Ա 05204081
Ս. Սահակյան ----------	Ն.Սահակյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1

<< 27 >>նոյեմբերի 2012թ

կնքված աշխատանքների կատարման

թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/4-2.1 >> գնման պայմանագրի

ՀՀ Արագածոտնի մարզ Ճարճակիս համայնքի դպրոցի վերանորոգման

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ / 3 թերթ /

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
1	**Միաձույլ ե/բ գոտիներ** Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-15 դասի բետոնով	խմ	2.50	40.0	100.00
2	Ամրան A500C	տն	0.098	450.0	44.10
3	Ամրան Aic	տն	0.062	450.0	27.90
4	Անցքերի բացում Φ16 L=250մմ և լցնում պոլիմերային շաղախով	հատ	50	0.5	25.00
5	Մետաղական հեծանի մոնտաժում	տն	0.198	50.0	9.90
6	Շվելեր N24	մ	8.10	10.0	81.00
7	Անկյունակ 75x75x6	մ	0.60	5.0	3.00
8	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	քմ	12.00	1.0	12.00
9	Խորշերի բացում 300x300x200	հատ	12	0.5	6.00
10	Ցեմ. ավազային շաղախ	խմ	0.008	30.0	0.24
11	**Տանիք** Ասբոշիֆերի ծածկույթի քանդում	քմ	296.00	1.0	296.00
12	Կավարամածի քանդում և հանձնում Պատվիրատուին	խմ	0.74	20.0	14.80
13	Շին աղբի հավաքում և բարձում ձեռքով	տն	20.00	10.0	200.00
14	Շին աղբի տեղափոխում 5կմ	տն	20.00	5.0	100.00
15	Ջրամկուսիչ շերտ տոլով որմնափայտի և տապաստի տակ	քմ	5.00	2.0	10.00
16	Ծածկի ջերմամեկուսացում խարամով	խմ	31.80	5.0	159.00
17	Փայտանյութի տեղադրում մշակված հականեխիչ մածիկով	խմ	1.84	200.0	368.00
18	Տանիքի ծածկույթի իրականացում ցինկապատ պրոֆիլավոր մետաղաթերթերով ԿՊ-25-0,55մմ, կավարամածի հետ միասին	քմ	470.00	4.5	2107.48
19	Եզրային տախտակի իրականացում, h=50մմ	քմ	24.50	10.0	245.00
20	Գագաթի տախտակի իրականացում, h=50մմ	քմ	5.40	10.0	54.00
21	Քիվի մաքրատաշ տախտակի ռականացում h=30մմ	քմ	81.00	6.0	486.00
22	Գագաթի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով /δ=0,55մմ/ b=330մմ	քմ	26.40	3.0	79.20
23	Գագաթի իրականացում հարթ ցինկապատ թիթեղով /δ=0,55մմ/ b=500մմ	քմ	19.00	3.0	57.00
24	Ջեղնալուսամուտների վերակառուցում շերտափղկերի հետ	հատ	4	10.0	40.00

25	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	9.00	3.0	27.00
26	Փայտե կավարամածի, եզրային և տախտակամածի հրապաշտպանում	քմ	431.40	0.2	86.28
27	Ձեղնալուսամուտների երեսապատում հարթ ցինկապատ թիթեղով /ճ=0,55մմ/	քմ	18.00	3.0	54.00
28	Փայտե շերափեղկերի յուղաներկում 2 անգամ	քմ	2.24	1.0	2.24
29	Ճարմանդների տեղադրում փայտե կոնստրուկցիաների ամրացման համար Φ10	կգ	60.20	0.5	30.10
30	Ծպեղնատքերի կապում պարապետին կամ ծածկի սալերին տեղադրվող խարիսխներից մետաղալարերով Φ6	կգ	35.00	0.5	17.50
31	Մտոցի անցքի մեծացում /ե/բ ծածկի քանդում/	խմ	0.0735	0.0	0.00
32	Քիվի մքարատաշ տախտակների ներկում 2 անգամ	քմ	81.00	1.0	81.00
33	Ձնարգելի տեղադրում	գծմ	67.50	1.5	101.25
34	Մետաղապլաստե դռնակների տեղադրում	քմ	0.56	40.0	22.40
35	**Բացվածքներ** Ալյումինե սպիտակդռների տեղադրում, ապակե փաթեթով, բացվող	քմ	4.80	50.0	240.00
36	Նույնը չբացվող	քմ	0.80	50.0	40.00
38	Մետաղապլաստե խուլ դռների տեղադրում	քմ	42.07	30.0	1262.10
39	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում	քմ	74.36	25.0	1858.98
40	Նույնը չբացվող	քմ	29.43	25.0	735.65
41	**Հատակներ**				
42	Ցեմ հարփեցնող շերտի իրականացում	քմ	286.08	2.0	572.16
43	B-12.5 դասի բետոնով նախապատրաստական շերտ	խմ	33.51	20.0	670.14
44	Հողի տոփանում խճաքարով	քմ	223.38	1.0	223.38
45	Շլակաբետոնե շերտի իրականացում 50մմ	խմ	10.49	30.0	314.82
46	Ցեմ. ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ	քմ	378.72	2.0	757.44
49	**Ներքին հարդարում** Առաստաղների սվաղ գաջի շաղախով	քմ	473.00	2.0	946.00
50	Պատերի սվաղ գաջի շաղախով	քմ	1223.90	2.0	2447.80
51	Սանհանգույցի և խոհանոցի պատերի սվաղում ց/ավազային շաղախով	քմ	73.40	2.0	146.80
52	Պլաստմասե կախովի առաստաղի տեղադրում սանհանգույցներում	քմ	22.70	2.0	45.40
57	Դռների և պատուհանների շեպուքյունների սվաղում գաջի շաղախով	քմ	56.00	2.0	112.00
60	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում Ե=300մմ	գմ	57.60	3.0	172.80
69	**Ապամոնտաժման աշխատանքներ** Դռների և պատուհանների քանդում/ հանձնում պատվիրատուին/	քմ	141.80	1.0	141.80
70	Միջնորմների և պատերի քանդում	խմ	51.80	20.0	1036.00
71	Բաց պաշգամբի մետաղական ճաղաշարի ապամոնտաժում/ հանձնում Պատվիրատուին/	քմ	36.00	0.5	18.00

73	Բետոնե հատակի քանդում /10սմ/	քմ	64.00	1.0	64.00
74	Պատերի գաջի սվաղի քանդում	քմ	730.00	0.5	365.00
75	Առաստաղների գաջի սվաղի քանդում	քմ	440.00	0.5	220.00
76	Շին աղբի հավաքում և բարձում ձեռքով	տն	132.00	10.0	1320.00
77	Շին աղբի տեղափոխում 5կմ	տն	132.00	5.0	660.00
78	ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ Դռների ր պատուհանների արտաքին շեպուլյունների սվաղում ց/ավազային շաղախով	գմ	253.00	0.5	126.50
79	Նույնի ներկում ճակատային ներկով	քմ	38.00	1.0	38.00
	Ամբողջը I մասի				**19659.655**
	II. Ջրամատակարարման ներքին ցանց/ուսումնական մասնաշենք/				
1	Մետաղապլաստե խողովակներ Ս25/20	գծմ	18.00	1.0	18.00
2	**Մետաղապլաստե խողովակներ Ս16/12**	գծմ	37.00	1.0	37.00
3	Ճկուն փողրակ d=15 մմ	հատ	6	1.0	6.00
4	Լվացման ծորակ d=15 մմ	հատ	5	2.0	10.00
5	Մետաղապլաստե խողովակների ձևավոր մասեր(եռաբաշխիչներ, անկյունակներ)	հատ	38	0.5	19.00
6	Անցքերի բացում բետոնե պատի մեջ	խմ	0.01	20.0	0.20
7	Կարգավորիչ ցանց Ρ 150 l	հատ	4	5.0	20.00
8	Պոլիէթիլենե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Ս125մմ	գծմ	16.00	1.0	16.00
	Ամբողջը II մասի				**126.20**
	III. Կոյուղու ներքին ցանց/ուսումնական մասնաշենք/				
1	Պոլիէթիլենե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Ս63մմ պատի վրա	գծմ	10.00	1.0	10.00
2	Պոլիէթիլենե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Ս110մմ հողի մեջ	գծմ	4.00	2.0	8.00
3	Պոլիէթիլենե խողովակ ռետինե սեղմիչ օղակներով Ս110մմ պատի վրա	գծմ	27.00	2.0	54.00
4	Լվացարանակոնք	հատ	5	15.0	75.00
5	Զուգարանակոնք լվացման տակառիկով	հատ	6	20.0	120.00
6	Հոսակների տեղադրում, տրամագիծը 50մմ	հատ	6	1.0	6.00
7	Ձևավոր մասեր	հատ	33	0.5	16.50
8	Մետաղակոնստրուկցիաներ խողովակների ամրացման համար	կգ	2.00	0.5	1.00
9	Մետաղակոնստրուկցիաների ներկում 2 շերտով	քմ	2.00	1.0	2.00
10	Անցքերի բացում բետոնե պատի մեջ	խմ	0.05	20.0	1.00
	Ամբողջը III մասի				**293.50**
	IV. Էլեկտրական լուսավորություն/ուսումնական մասնաշենք/				
1	Մալուխ պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը 4x16մմ2/ΒΒΓ	գծմ	50.00	2.5	125.0
2	Մետաղական ճոպան	մ	20.00	0.5	10.0
3	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով,հատվածքը 1x2.5մմ2/ ΠΠΒ կարմիր	գծմ	700.00	0.3	210.0

4	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով,հատվածքը 1x2.5մմ2/ ՊՊՎ կապույտ	գծմ	500.00	0.3	150.0
5	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով,հատվածքը 1x1.5մմ2/ ՊՊՎ դեղին	գծմ	500.00	0.2	100.0
6	Ավտոմատ անջատիչների արկղ պլաստմասե,փականով,պատի մեջ տեղադրվող (600x400x150մմ),	հատ	1	5.0	5.0
7	Ավտոմատ անջատիչ (եռաբևեռ) C 63 Ա, 6kA	հատ	1	3.0	3.0
8	Ավտոմատ անջատիչ (եռաբևեռ) C 16 Ա, 6kA	հատ	16	1.0	16.0
9	Ավտոմատ անջատիչ (եռաբևեռ) C 10 Ա, 6kA	հատ	9	1.0	9.0
10	Երկբևեռ խրոցակային վարդակ, տուփով, երրորդ հողանցման հպակով, բաց հողորդագծի համար 220Վ,10Ա	հատ	95	1.0	95.0
11	Անջատիչ մեկ սեղմակով, պատի մեջ տեղադրվող	հատ	9	1.0	9.0
12	Անջատիչ երկու սեղմակով, պատի մեջ տեղադրվող	հատ	4	1.0	4.0
13	Մոնտաժային տուփ (մեկ տեղանոց)	հատ	117	0.5	58.5
14	Շրջանակ (մեկ տեղանոց)	հատ	99	0.2	19.80
15	Շրջանակ (երկու տեղանոց)	հատ	9	0.2	1.80
16	Ամրակներ	հատ	20		0.00
17	Լուսատու կետիկային, էլեկտրաշիկացման թելիկով լամպով 220Վ,60Վտ	հատ	8	3.0	24.00
18	Դրսի լուսատու	հատ	1	3.0	3.00
19	Ջահ առաստաղի	հատ	1	5.0	5.00
20	Լուսատու 2x18Wt լյումինեսցենտային լամպերով	հատ	22	3.0	66.00
21	Լուսատու 2x36Wt լյումինեսցենտային լամպերով	հատ	53	4.0	212.00
	Ամբողջը IV մասի				**1126.10**
	V.Արտաքին ջրամատակարարում				
1	IV կարգի գրունտների քանդում խրամուղիներում ձեռքով	խմ	3.00	5.0	15.0
2	IV րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով 0.5 խմ շերեփի տարողությամբ կողլիցք	խմ	57.00	0.8	45.6
3	V րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով 0.5 խմ շերեփի տարողությամբ կողլիցք	խմ	73.00	1.0	73.0
4	V-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորովր բարձում ավտոինքնաթափի վրա 0.65 խմ շերեփի տարողությամբ	խմ	7.00	1.0	7.0
5	Ավազի նախապատրաստական շերտ 10սմ. հաստությամբ	խմ	7.00	5.0	35.0

7	Համակարգի լվացում և ախտահանում	գծմ	80.00	0.1	8.0
8	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղի բնահողով	խմ	112.00	0.3	33.6
9	III կարգի գրունտի ետլիցք ձեռքով,տոփանումով	խմ	26.00	2.0	52.0
10	Ավելցուկային գրունտի բարձում ձեռքով	խմ	7.00	3.0	21.0
11	Շինաղբի տեղափոխում 5 կմ հեռավորության վրա	տն	13.65	5.0	68.3
	Ամբողջը V մասի				**370.450**
	VI.Արտաքին կոյուղի				
1	IV կարգի գրունտների քանդում խրամուղիներում ձեռքով	խմ	2.00	5.0	10.00
2	IV րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով 0.5 խմ շերեփի տարողությամբ կողլիցք	խմ	28.00	0.8	22.40
3	V կարգի գրունտների քանդում խրամուղիներում ձեռքով	խմ	2.00	5.0	10.00
4	V րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով 0.5 խմ շերեփի տարողությամբ կողլիցք	խմ	33.00	1.0	33.00
5	V-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորովը բարձում ավտոինքնաթափի վրա 0.65 խմ շերեփի տարողությամբ	խմ	5.00	1.0	5.0
6	Ավազի նախապատրաստական շերտ 10սմ. հաստությամբ	խմ	3.00	5.0	15.0
7	Կոյուղու պոլիէթիլենե Ս160 խողովակներ	գծմ	35.00	2.0	70.0
8	Կոյուղու կլոր հորեր հավաքովի ե/բ էլեմենտներից Ս700	խմ	1.50	20.0	30.0
9	Աստիճաններ պատրաստում և մոնտաժում	տն	0.01		0.0
10	Մետաղակոնստրուկցիաների ներկում 2 շերտով	քմ	0.50		0.0
11	Մետաղական տարրեր հորերի սեյսմակայունության համար	տն	0.05	400.0	20.0
12	Թուջե մտոցի տեղադրում	հատ	1	10.0	10.0
13	Խրամուղու ետլիցք բուլդոզերով, տեղի բնահողով	խմ	52.00	0.3	15.60
14	III կարգի գրունտի ետլիցք ձեռքով,տոփանումով	խմ	13.00	2.0	26.0
15	Ավելցուկային գրունտի բարձում ձեռքով	խմ	5.00	3.0	15.0
16	Շինաղբի տեղափոխում 5 կմ հեռավորության վրա	տն	9.75	5.0	48.750
	Ամբողջը VI մասի				**330.750**
	VII.Ջրաչափական հանգույց				
1	Գնդային փական DN20	հատ	1	3.0	3.0
2	Ջրի ֆիլտր DN20	հատ	1	3.0	3.0
3	Թիակավոր բազմաշիթ ջրաչափ DN20	հատ	1	7.0	7.0
4	Պոլիէթիլենե եռակցվող խողովակ de20	գծմ	2.00	1.0	2.0
	[illegible] Ֆ20	հատ	1	0.5	0.5

7	Ճկուն կցորդիչ	հատ	2	1.0	2.0
8	B-15 դասի բետոնով նախապատրաստական շերտ	խմ	2.10	20.0	42.0
9	Ջերմամեկուսիչ նյութ	մ	1.30	1.0	1.30
10	Շինարարական սիլիկոն	հատ	1	1.0	1.0
11	Դռների (մտոցների) կոնստրուկցիայի մոնտաժում	տն	0.118	500.0	59.0
12	Ջերմակեկուսացված սալ	հատ	1	9.0	9.0
13	B-15 դասի բետոնով նախապատրաստական շերտ	խմ	0.90	20.0	18.0
14	խճից նախապատրաստական շերտի պատրաստում տուփանումավ	խմ	1.30	6.0	7.80
	Ամբողջը VII մասի				*156.60*
	Ընդամենը				22063.255
	Շահույթ - %	*5%*			*1103.163*
	Ընդամենը				*23166.41775*
	ԱԱՀ - 20%	*20%*			*4633.284*
	Ամբողջը				*27799.701*

Ընդամենը քսանյոթ միլիոն յոթ հարյուր ինսունինը հազար յոթ հարյուր մեկ դրամ ներառյալ ԱԱՀ

Պատվիրատու

<< ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>

<<Աշտարակիի ՏԳԲ>>

Հ/Հ h/h 900441041226 ՀՎՀՀ 05004247

Ս. Սահակյան ----------

(ստորագրություն)

Կ.Տ

Կապալառու

<< ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

<< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >>ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ

Հ/Հ h/h 220043[illegible] ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան ----------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2

<< 27 >>նոյեմբերի 2012թ

կնքված աշխատանքների կատարման

թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/4-2.1 >> *գնման պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< <<Ճարճակիս համայնքի դպրոցի վերանորոգման>> աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների Անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	**<<Ճարճակիս համայնքի դպրոցի վերանորոգման>>**աշխատանքներ	***27 799.701***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	20.12..12թ.
2	**ԸՆԴԱՄԵՆԸ**	***27 799.701***	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	20.12.12թ.

Պատվիրատու

<< ՀՀ Արագածոտի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4 >>

<<Աշտարակիի ՏԳԲ>>

Հ/Հ հ/հ 900441041226 ՀՎՀՀ 05004247

Ս. Սահակյան ----------

(ստորագրություն)

M.P.

Կապալառու

<< ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11

<< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >>ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ

Հ/Հ հ/հ 22004333112700[illegible] ՀՎՀՀ 05204081

Ն.Սահակյան ----------

(ստորագրություն)

M.P.

Հավելված թիվ 3
<< 27 >>նոյեմբերի 2012թ
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ- ԱՇՁԲ-12/4-2.1 >> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2012 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	**<<Ճարճակիս համայնքի դպրոցի վերանորոգման>>** աշխատանքներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	**27 799.701**	**27 799.701**	**27 799.701**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

Պատվիրատու
<< ՀՀ Արագածոտի մարզպետարան
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ. Պետրոսյան 4
<<Աշտարակիի ՏԳԲ>>
ՀՎՀՀ h/h 90044101226 ՄՀՄՀ 05004247
Ս. Սահակյան ----------
(ստորագրություն)

Կապալառու
<< ԵՍ ԵՎ ՆԱ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Ապարան.Պ.Սևակի 11
<< Ակբա կրեդիտ Ագրիկոլբանկ >>ՓԲԸ Արագածոտն Մ/Ճ
ՀՎՀՀ h/h 22004333112700 ՀՎՀՀ 05204081
Ն.Սահակյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 4

<< 27 >>նոյեմբերի 2012թ

կնքված աշխատանքների կատարման

թիվ << ՀՀ- ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/4-2.1 >> *գնման պայմանագրի*

Կապալառու

_____

_____

_____

հասցե_____

հհ_____

_____

հվհհ_____

Պատվիրատու

_____

_____

_____

հասցե _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝_____.

Պատվիրատուն՝ ի դեմս_____և կապալառու՝ ի դեմս_____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> <<_____>> 20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված նախագծանախահաշվային փաստաթղթերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն <<___>> <<_____>> 20 թ-ից <<___>> <<_____>> 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար ՀՀ դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի)
Ընդամենը	_____	_____		_____

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)

ազգանուն_____

Կ.Տ

Աշխատանքը ընդունեց

(ստորագրություն)

ազգանուն _____

Կ.Տ